ՀԱՆԳԻՍ

ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱԶԼԸՄՅԱՆԻ

Ս. Էջմիածին հասած հեռագիրը գուժեց կորովի և հայրենասեր մեծանուն եկեղեցականի՝ Գեր. Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանի մահը, որ տեղի է ունեցել Աթենքում, 1951 թվի մայիսի 2-ի շաբաթի օրը, ծանր հիվանդությունից հետո:

Հոգելույս Սրբազանը ծնվել է Նիկոմիդիո Պարտիզակ հայաշատ քաղաքում 1870 թվին: Սովորել է տեղի Ազգային վարժարանում, աշակերտելով լուսահոգի եղիշե արքեպիսկոպոս Դուրյանին: 1893—1895 թվերին կարգվել է Պարտիզակի Ազգային վարժարանի ուսուցիչ: 1894 թվին Նիկոմիդիո համբավավոր առաջնորդ լուսահոգի Ստեփանոս արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1895—1900 թվերին հանգուցյալ Սրբազանը կարգվել է տնսուչ Ազգային վարժարանի և միաժամանակ քարոզիչ տեղի երկու եկեղեցիներում: 1900—1905 թվերին, նա ձեռնհասորեն վարել է Նիկոմիդիո առաջնորդական փոխանորդությունը, իսկ 1905 թվից մինչև առաջին Համաշխարհային պատերազմը՝ Պանտրոմա—Պալրքեսերի միացյալ թեմերի առաջնորդությունը: 1910 թվին Մատթեոս կաթողիկոսից ձեռնադրվել է թեմի եպիսկոպոս: 1915 թվին, հայկական ջարդերի օրերին, իր ժողովրդի հետ տեղահան է եղել դեպի Սիրիա և մի շարք պատասխանատու պաշտոններ վարել տարբեր վայրերում: 1924 թվին Հունաստանի պատգամավորական ժողովի կողմից ընտրվել է առաջնորդ: 1926 թվին ստացել է արքության աստիճան Գեորգ Ե. Կաթողիկոսի կողմից:

Հոգելույս Մազլումյան սրբազանը Հունաստանի առաջնորդությունը վարել է 28 երկար տարիներ անասելի կորովով և սրտեռանդ նվիրումով:

Նա ջանք չխնայեց յաթաղանից ու սրից ազատված և Հունաստան ապաստանած հայկական խլյակները առաջնորդարանի թևերի տակ ծվարելու գործում, սպասելով այն երջանիկ օրվան, երբ նրանք հնարավորություն կունենան գաղթել իրենց սրբազան Հայրենիքը: Եվ հայրենասեր եկեղեցականի իղձը իրականացավ — հունահայոց զգալի մասը տեղափոխվեց Հայրենիք:

Սրբազանը մեծ հայրենասեր և մեծ էջմիածնասեր եկեղեցական էր: Բոլորի հիշողության մեջ թարմ են նրա անկեղծ և սրտաբուխ հառերը 1945 թվին Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում, որին մասնակցում էր որպես հունահայոց պատգամավոր: Նա մինչև վերջը մնաց հավատարիմ Հայրենիքին և Ս. Էջմիածնին: Իր հայրենասիրության և էջմիածնասիրության համար նա ենթարկվեց անլուր հալածանքի և հետապնդման հայրենադավ շրջանից:

Սրբազանի վերջին կտակն է եղել՝ իր աճյունները տեղափոխել Հայրենիք և թաղել Հայրենի հողում: Հայրենասեր հոգևորականի իղձը պիտի անպայման կատարվի — Հայրենի հողը պատրաստ է պատվով իր գիրկն ընդունել օտարության մեջ մահացած իր հայրենասեր որդու աճյունները: